ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա

Թեմա՝ Բատիկ (մետաքսանկարչություն)

Հետազոտող՝ Սուսաննա Բաղալյան

Ղեկավար՝ Լ. Իսկոյան (մանկ. գ.թ., դոցենտ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Բատիկի պատմությունը և զարգացման ընթացքը……4

Բատիկի տեսակները ……7

Եզրակացություն ……11

Օգտագործված գրականության ցանկ ……12

Հավելված……13

Ներածություն

Կիրառական արվեստը ծագել է այն պահից, երբ մարդ արարածն ուզել է՝ իրեն շրջապատած առարկաները ոչ միայն պիտանի, այլև գեղեցիկ լինեն: Աշխարհի պատմության ամենավաղ ժամանակաշրջաններից մարդ արարածը ձգտել է, որ իր կենսագործունեությանն առնչվող առարկաներն ու երևույթները լինեն իրեն հաճելի, հարմարավետ և գեղեցիկ:

Այն ժամանակներից, երբ մարդ սկսել է փնտրել գեղեցիկը, նա իր ձեռքով նաև ստեղծել է այն կամ փոփոխել արդեն առկա բաները: Այս ամենը օգնել են մարդուն լինել ներդաշնակ, տարբերվող, իսկ ժամանակի ընթացքում գեղեցիկի առկայությունը թույլ է տվել մարդուն լինել ավելի բարձր:

Գեղեցիկի մասին իրենց պատկերացումները մարդիկ արտահայտել են տարբեր ձևերով: Դրա համար սկսել են զարդանախշել նախ իրենց աշխատանքային գործիքները, հետո՝ կենցաղային իրերն ու կահկարասին, սեփական հագուկապը, և այս եղանակներից մեկն էլ եղել է կտորի վրա նախշազարդումները:

Կտորի վրա նախշազարդումը, որպես պարզապես ժամանցի միջոց կամ տարբերվելու հնարավորություն տվող եղանակ, եղել է շատ վաղուց, սակայն, հենց որպես արվեստի մի տեսակ, այն համեմատաբար ուշ շրջանում է տարածվել աշխարհում: Այժմ խոսքը գնում է արվեստի մի շատ յուրօրինակ ու հետաքրիքր տեսակի մասին, որը կոչվում է բատիկ:

Ժամանակակից աշխարհում բատիկի տեխնոլոգիայով շատ ու շատ կիրառական առարկաներ են ստեղծվում, այսինքն ոչ միայն կտավներ այլև շարֆեր, վարագույրներ, սփռոցներ, ամեն տեսակի հագուստ՝ սկսած տաբատից, վերնաշապիկից, վերջացրած ամենաշքեղ զգեստներով:

Բատիկի տեխնիկայով ստեղծված ապրանքներն ու հատկապես հագուստները ժամանակակից աշխարհում ունեն լուրջ պահանջարկ այդ իսկ պատճառով, որքան էլ դրանք լինեն թանկ, այնուամենայնիվ ակտիվ վաճառքի կենտրոնում են

Այժմ միասին հասկանանք թե զարգացման ինչ ուղի է ունեցել բատիկը որպես արվեստի ճյուղ, ինչ տեսակներով է հայտնի, և թե դրանցից յուաքանչյուրն ինչով են առանձնանում:

Բատիկի պատմությունը և զարգացման ընթացքը

Բատիկը արվեստի այն ճյուղերից է, որի առաջացման պատմության մասին գիտնականները դժվարությամբ են եկել ընդհանուր տեսակետի՝ պատասխանելով այն հարցին, թե որն է եղել նրա ծննդավայրը:

Բատիկ բառը (batik) ինդոնեզերեն բառ է, որը թարգմանաբար նշանակում է կաթիլ բամբակյա գործվածքի վրա՝ Ba- բամբակյա գործվածք, tik- կաթիլ,կետ: Սրա հետ կապված կա նաև Մեմբատիկ (membatik) բառը, որը նշանակում է նկարել, ծածկել կաթիլներով[1]:

Մի ժամանակ մարդիկ փորձում էին ամեն ինչում ինչ-որ իմաստ գտնել և այս տեխնիկայով նկարազարդված կտորը համարում էին հզոր չարխափան: Դրա համար էլ ամեն մարդ ուզում էր նման մի բան ունենալ Որոշ երկրներում մինչև հիմա էլ բատիկի տեխնիկայով նախշազարդած կտորը սուրբ է համարվում[2]: Այսպիսով, բացի գեղեցիկ լինելու հնարավորություն տվող երևույթից, այն ուներ նաև այլ, այսպես կոչված, գործառույթներ, որոնցից մեկն էլ մարդկանց՝ սրբությանը մոտ պահելն էր

Այժմ գնանք ավելի վաղ ժամանակներ և հասկանանք դրա ծագման պատմությունը:

Գծանկարներով առաջին գործվածքները հայտնվել են մ.թ.ա 4-րդ դարում: Սրանք այն նյութերն էին, որոնք եգիպտացիներն օգտագործում էին մումիաների ծիսական թաղման համար: 7-րդ դարում բատիկը սկսեց տարածվել Չինաստանում և Ճապոնիայում: Այնուհետև այս արվեստը արագորեն տարածվեց և լայն հայտնություն ձեռք բերեց Պարսկաստանում, Շրի Լանկայում, Մալայզիայում, Պերուում[3]:

Եգիպտոսում բատիկն արդեն գոյություն ուներ 4-րդ դարում. մոմային ու մեղրամոմային մշակմամբ պատել են կտորները, համեմունքային գունանյութերով լցրել մոմից ճաք եկող արանքները ու արդյունքում այդ նախշազարդ-մոմապատ կտորներով պարուրել մումիաներին[4]: Աֆրիկայում էլ էր այն հնուց հայտնի, սակայն իրենց եզրագծող, պահող նյութը այդքան էլ մեղրամոմը չէր, այլ բրնձի թանձրուկն ու օսլան էր[5]:

Կա վարկած, որ Հոլանդացիներն առաջինն էին, որ 19-րդ դարի առաջին կեսին օգտագործեցին բատիկ դեկորատիվ գործվածքների համար: Բայց դարի կեսերին

---

[1] Տե՛ս Погадаев, Виктор. «Чудо батика» — в «Сударушка», Москва 2001
[2] Տե՛ս Погадаев, Виктор. «Символ единения душ» Москва 1999 էջ 11
[3] Տե՛ս նույ տեղը էջ 14
[4] Տե՛ս Martha C.S. Heppard-Watercolor Batik: An Artist'S Guide to Watercolor Batik on Rice Paper, 2015, USA ԷՋ 25
[5] Տե՛ս Dr. Priti Samyukta-A Comparative Study of Batik and Kalamkari Paintings,2021 USA,էջ 46

նրանք կորցրել էին իրենց ազդեցությունը եվրոպական շուկայում և զարգացել ձեռնարկատիրական գործունեություն։ Այդ ընթացքում երբ առաջացավ հերթական պահանջարկը կապված բատիկի արվեստի հետ, բացվեցին բատիկի արտադրության մանուֆակտուրաներ, որոնք հետևեցին տիրող միտումներին և կարողացան գոհացնել ամենախստապահանջ հաճախորդին։

Բայց թերևս ամենահայտնի երկիրը իր յուրահատուկ բատիկով Ինդոնեզիան է, որտեղ գործվածքների վրա գեղարվեստական նկարչության արվեստը արմատավորվել է 12-րդ դարում: Այստեղ բատիկի ավանդական պատկերների մոտ երեք հազար տարբերակ կա[6]:

2009թ.-ի հոկտեմբերի 2-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ն Ինդոնեզիայի բատիկը ճանաչեց որպես մարդկության արժեքավոր ժառանգության գլուխգործոց: Այդուհետ, ամեն տարի հոկտեմբերի 2-ը նրանք նշում են բատիկի օր: Մինչ 17-րդ դարը բատիկի առևտուր իրականացվել է Ինդոնեզիայի և հարակից տարածքի շրջանակներում: Եվրոպայում բատիկը սկսվեց կիրառվել 19-րդ դարի երկրորդ կեսից[7]:

20-րդ դարի սկզբին բատիկը նոր թափով նորաձևություն մտավ Եվրոպայում, Անգլիայում և Ամերիկայում: Դա տեղի ունեցավ փոքրաթիվ արվեստագետների ոգևորության շնորհիվ, ովքեր, հիացած բատիկով, մեկնեցին հեռավոր երկրներ և ուսումնասիրեցին հնդիկ և ինդոնեզացի վարպետների բատիկի յուրահատուկ տեխնիկան[8]:

20-րդ դարի մեծ մասի ընթացքում Ռուսաստանը մնաց երկաթե վարագույրի հետևում, ուստի բատիկը մեր երկրում հայտնվեց միայն դարասկզբին։ Բայց չնայած նոր հայտնագործություններին, բատիկը Ռուսաստանում դանդաղ զարգացավ: Արվեստագետներն ավելի հաճախ ստիպված էին ոչ թե ստեղծագործել, այլ հարմարվել արդեն եղած կանոններին և շարժվել դրանց հիման վրա[9]:

Ռուսաստանում բատիկը տարածվում էր այնպիսի խոշոր քաղաքներում, ինչպիսիք են Լենինգրադը և Մոսկվան։ Չնայած փորձի պակասին՝ նկարիչները կարողանում էին հաջողությամբ ստեղծել շալեր, վարագույրներ, շարֆեր։ Փորձի փոխանակման անհրաժեշտությունից ելնելով արվեստագետները միավորվեցին արտելներում, որն էլ իր հերթին տվեց նոր թափ բատիկի զարգացմանը[10]: Այդ ժամանակ ստեղծվող պատկերները առավելապես թելադրվում էին տվյալ ժամանակի

---

[6]Տե՛ս Сергей Германович Давыдов - Батик: техника, приемы, изделия : [энциклопедия], Москва, 2010, ст 6
[7] Տե՛ս Rudolf Smend, Donald Harper - Batik, Traditional Textiles of Indonesia,2016 էջ 9
[8] Տես նույն տեղը էջ 114
[9] Տե՛ս Сергей Германович Давыдов - Батик: техника, приемы, изделия : [энциклопедия], Москва, 2010, ст 10
[10] Տե՛ս Н.И. Фальковский - История водоснабжения в Россииб 2013 Москва ст 227

մասը կազմող խորհրդանշային երևույթներով, և զարմանալի չէ որ գերիշխում էին առավել խորհրդային պատկերներն ու խորհրդանիշները:

Ռուսաստանում բատիկը նոր թափով զարգացել է Ռուսաստանի վաստակավոր արտիստուհի Իրինա Տրոֆիմովայի շնորհիվ: Նրան հաջողվել է մեկնել արտերկիր՝ այն երկրներ, որտեղ բատիկն ունեցել է լայն պատմություն: Նրա կողմից կատարված ուսումնասիրությունների, ձեռք բերած փորձի ու գիտելիքների շնորհիվ Ռուսատանում սկսեց տարածվել բատիկի մասին առաջին ամբողջական տեղեկատվությունը, ինչպես դրա ծագման, այդպես էլ գործածման գաղտնիքների մասին[11]:

Այսպիսով, յուրաքանչյուր երկիր իր ձևով է արձագանքել բատիկի՝ որպես արվեստի մի ենթաճյուղ մուտք գործելու հանգամանքին, դրա յուրահատուկ տեխնիկաներին ու գործածման կանոններին: Սակայն բոլոր երկրների փորձը միավորում է այն, որ բատիկը կարճ ժամանակում գրավեց բարձրաճաշակ արվեստագետների և ազնվականների ուշադրությունն ու անտարբեր չթողեց գեղեցիկը գնահատող և ոչ մեկի: Դա էր պատճառը որ այն սահուն կերպով տարածվեց ու զարգացավ՝ չկորցնելով իր յուրօրինակ նշանակությունը:

[11] Տե՛ս Сергей Германович Давыдов - Батик: техника, приемы, изделия : [энциклопедия], Москва, 2010, էջ 10

Բատիկի տեսակները

Մինչև անցնելը բատիկի հիմնական տեսակների մեկնաբանմանը, փորձենք առավել մանրամասն մեկնաբանել բատիկը իր ողջ բնույթով:

Բատիկը՝ եզրագծող խառնուրդի օգտագործմամբ ձեռքի գեղանկարչական աշխատանք է կտորի վրա: Դրանով կարելի է աշխատել բամբակյա, բրդյա, կամ սինթետիկ կտորի վրա՝ համապատասխան ներկերի օգնությամբ: Բացի ճիշտ ներկերի ընտրությունից շատ կարևոր է նաև եզրագծող խառնուրդի խստագույնս պատրաստումը, որովհետև եզրագծող խառնուրդն օգտագործվում է պատկերի հստակ սահմաններ ստանալու համար: Այդ խառնուրդը ստացվում է պարաֆինի, բենզինի կամ ջրի հիմքով՝ կախված նրանից, թե ինչ տեխնիկա, ինչ կտոր և ներկեր են ընտրվել: Պատկերը ստացվում կտորի վրա կամ թափանցիկ կտորի տակ դրված էսքիզի օգնությամբ, սակայն երբեմն նաև առանց էսքիզի[12]: Սրան առավել մանրամանս կանդրադառնանք բատիկի տեսակները մեկնաբանելիս:

Այժմ անցնենք բատիկի դասակարգման տեսակներին: Առհասարակ, բատիկի դասակարգման տարբերակները բազմաթիվ են: Դրանցից ամեն մեկը բատիկը մեկնաբանում է յուրովի, բաժանում տարբեր ճյուղերի: Սակայն ամենատարածված ամենաընդհանրական, և թերևս ամենաընդգրկուն մեկնաբանման համաձայն բատիկը բաժանվում է երեք հիմնական տեսակի՝ տաք, սառը և ազատ նախշազարդում:

Տաք բատիկ: Տաք բատիկը գործվածքի վրա նկարելու ամենահին տեսակն է: Այն կոչվում է տաք մեթոդ, քանի որ գործածվող նյութը, որն օգտագործվում է աշխատանքի մեջ, կիրառվում է գործվածքի վրա միայն այն ժամանակ, երբ այն տաք է: Տաք բատիկի դեպքում որպես եզրագծող խառնուրդ օգտագործվում է մոմը: Մոմի կիրառումը տեղի է ունենում հետևյալ կերպով. Մոմը տարածվում է հատուկ գործիքի միջոցով. Մոմով ծածկված մասերը չեն ներծծում ներկը, բացի այդ, սահմանափակում են դրա տարածումը: Մոմի նմանօրինակ կիրառումը հնարավոր է տաք, հալեցված վիճակում, հենց այն պատճառով էլ ինչպես նշվել տեխնիկայն կոչվում է «տաք»[13]:

Տաք բատիկի տեխնոլոգիան օգտագործվում է հիմնականում բամբակե կտորի վրա նկարելիս: Նախշազարդման ընթացքում եզրագիծը տարվում է միևնույն տեղում մի քանի շերտով: Վերջինս նման դեպքում հնարավորություն է ունենում խորը թափանցել գործվածքի մանրաթելերի մեջ, արագ չորանալ, ինչպես նաև ստեղծել ամուր սահման: Գունազարդման բաղադրությունը չի կարող տարածվել, այսինքն

---

[12] Տե՛ս Елена Александровна Шилкова- Волшебный батик, 2012, Москва էջ-11

[13] Տե՛ս Шатунова Ольга Васильевна, Сергеева Альбина Борисовна - Современные виды декоративно-прикладного творчества: Учебное пособие, Елабуга 2015 էջ 111

գույները կմնան միայն եզրագծված սահմանների մեջ: Բացի այդ այս տեխնիկան հնարավորություն է տալիս գույներին երևան առավել վառ և հագեցած[14]:

Տաք բատիկի կիրառման տեխնիկան առավել կոնկրետ ձևով եթե փորձենք մեկնաբանել՝ հետևյալն է.մաքուր, անխառնուրդ մոմը՝ պարաֆինը, այլումինե, թիթեղե տարրայի մեջ մարմանդ կրակին հալեցվում է և այդպես տաք-հալված վիճակում վրձնահարվածների ու տարածման միջոցով դրվում կտորին, որն էլ վարկենապես չորանում է: Տաք պատիկի պարագայում մոմանյութերը քսում են հատուկ գործիքի օգնությամբ, որը կոչվում է *չանտինգ*[15]:

Տաք բատիկով շատ հետաքրքիր հնարքներ են բանեցվում. ասենք ամբողջ կտորը պատում են մոմով, վրան լցնում գունանյութ և սկսում ճմռթել կտորը, որի հետևանքով առաջանում են բազում ճաքեր, որոնց մեջ է լցվում գույնը: Ապա արդուկով և թերթերով հեռացնում են մոմե զանգվածը՝ հետևյալ կերպ. մոմերով եզրագծված կամ պատված աշխատանքը չորանալուց հետո հանվում է շրջանակից, արդուկի համար նախատեսված սեղանին փռում են թերթեր , վրան դնում աշխատանքը, ապա նորից վրան (մոմերով հատվածը) ծածկում թերթերով և տաք արդուկով արդուկում այնքան, մինչև մոմային զանգվածը ներծծվի թղթին: Ապա այդ մոմի յուղով պատված թղթերը փոխում նորով ու այս գործընթացն այնքան անգամ կրկնում, մինչև մոմային մասը լիարժեք դուրս գա կտորց և թղթերն արդուկելիս մնան նույնությամբ չոր: Վերջում աշխատանքը լվացվում է գոլ օճառաջրով, արվում եզրակարերը[16]:

Հաշվի առնելով այս ամենը կարելի է ենթադրել, որ տաք բատիկի տեխնոլոգիան ավելի բարդ է և ժամանակատար, հատկապես սկսնակների համար:

Բատիկի հաջորդ տեսակը կոչվում է «սառը», որի տեխնոլոգիան ի հայտ եկավ քիմիական գիտելիքների զարգացմանը զուգընթաց: Դա տեղի ունեցավ 20-րդ դարի սկզբին[17]: Անվանումից արդեն իսկ պարզ է որ այս մեթոդի առաջին առանձնահատկությունն այն է, որ վերջինս չի պահանջում նյուրթերի տաքացում:

Սառը բատիկը, որը կոչվում է նաև եվրոպական, հիմնականում կիրառվում է մետաքսի համար, չնայած չի սահմանափակում նաև մյուս կտորների կիրառումը: Սառը բատիկի տեխնիկայում օգտագործում են անիլինի հիմքով ներկեր: Այս դեպքում եզրագծի դեր է կատարում հատուկ նյութ, որը կարելի է պատրաստել տնային

---

[14] Տե՛ս Елена Александровна Шилкова- Волшебный батик, Москва, 2012 էջ-112

15 Տե՛ս Погадаев В. А. Малайзия. Карманная энциклопедия. М.: Муравей-гайд, 2000, էջ. 224:

[16] Տե՛ս Сергей Павлович Кашин- Ваш домашний стилист. Шарфик, платочек, парео. Как красиво и модно повязать, Москва 2013 էջ 561

[17] Տես նույն տեղը էջ 563

պայմաններում, բայց կան նաև պատրաստի նյութեր, կամ ինչպես հաճախ անվանվում է բատիկում՝ ռեզերվներ: Կան ինչպես գունավոր, այնպես էլ անգույն ռեզերվներ[18]:

Որպես կանոն, սառը բատիկը պահանջում է ավելի բծախնդիր և զգուշավոր աշխատանք, քանի որ այն, ի տարբերություն բազմաշերտ տաք բատիկի, ստեղծվում է մեկ շերտով:

Միաժամանակ, սառը բատիկի տեխնիկան ավելի մեծ հնարավորություն է ստեղծում ազատ նախշանկարելու և ստեղծելու բնապատկերային դեկորատիվ աշխատանքներ: Մեկ հպման տեխնիկան, այսինքն մեկ շերտով աշխատելու պահանջը թույլ է տալիս ստեղծել աշխատանքներ, որոնք նման են թաց ջրաներկի տեխնիկային[19]:

Հարկ է նշել, որ ի տարբերություն տաք բատիկի, որն արվում է բացառապես մաքուր մոմ-պարաֆինով և չորանում է վարկենապես, սառը բատիկը՝ լինելով մի քանի բաղադրիչների խարնուրդ, չորանում է բավական ուշ՝ 6-12 ժամում: Դրանից հետո նոր միայն կարելի է եզրագծերի ներսում գունադրում անել[20]:

Նյութերի լավ ներթափանցումը գործվածքի մեջ ամենակարևոր պայմանն է ուրվագծային նկարչության մեջ: Պատճառն այն է, որ եթե եզրագիծը գծելիս բացեր մնան, ներկը կառանձնանա նկարից: Խիտ գործվածքի վրա աշխատելիս գծվում է հաստ եզրագիծ, իսկ թափանցիկ, թեթեւ գործվածքների վրա՝ ավելի բարակ

Գոյություն են ունեցել սառը բատիկի նյութի պատրաստման տարբեր մոտեցումներ: Երկար ժամանակ չի գտնվել այն մոտեցումն ու որը լիարժեք կլիներ սակայն այժմ բազմաթիվ փորձերից ու քննարկումներից հետո տարածված տարբերակ է դարձել հետևյալը՝ խորը կաթսայի մեջ եռացնել ջուր, ապա կրակը մարմանդեցնել ու այդ ջրի մեջ դնել ուրիշ խորը ամանով վերոհիշյալ բաղադրությամբ զանգվածն ու դանդաղ, համաչափ, զգույշ խառնել, մինչև այն լուծվի և դառնա համասեռ: Թողնել սառչի, լցնել համապատասխան եզրագծող ամանի մեջ, օգտագործել: Սովորաբար օգտագործում են պինդ և հեղուկ խառնուրդներ Եզրագծող նյութը լինում է և՛ գունավոր, և՛ անգույն: Գունավոր եզրագիծ ստանալու համար եփելիս խառնվում է հատուկ գունանյութ: Որպես կանոն՝ սառը բատիկը պահանջում է ավելի կոկիկ վերաբերմունք, քանի որ նկարն ստանում ենք մեկ շերտով[21]:

---

[18] Տե՛ս Иолтуховская Екатерина Александровна- Батик для начинающих. Мастер-классы по ручной росписи шелка, Санкт-Петербург, 2015 էջ 11

[19] Տե՛ս Ludmila Maltseva, Tatyana Belaya- METHODS OF EDUCATION OF FINE ARTS AND CRAFTS, USA, 2015, էջ 72

[20] Տե՛ս Иолтуховская Екатерина Александровна - Батик для начинающих. Мастер-классы по ручной росписи шелка, Санкт-Петербург 2015 էջ 7

[21] Տե՛ս Елена Александровна Шилкова- Батик, Москва, 2012 էջ -19

Բատիկի մյուս տեսակը կոչվում է ազատ նախշազարդում, որն ունի կիրառման տարբեր ձևեր: Տարածված տարբերակներից է հետևյալը. շրջանակի վրա ձգած կտորը կամ թրջում են կերակրի աղի ջրային լուծույթով և չորանալուց հետո նկարում, կամ աղը շաղ են տալիս ազատ ձևավորումով Սա սահմանափակում է ներկի հոսունությունը, հնարավորություն է տալիս նկարելու ազատ հպումներով՝ տարբերակելով գույնի հագեցվածությունն ու ձևերը:

Ազատ նախշազարդման տեխնոլոգիաներից մեկն էլ կտորի հանգուցային ներկման մեթոդն է: Այստեղ հիմնական և որոշիչ դեր ունի կտորի ընտրությունը: Կարևոր է նախընտրել մանրաթելային ուղիղ հյուսվածքով գործվածքներին: Նախօրոք հարկավոր է մոտ երկու ժամ կտորը թողնել տաք ջրի մեջ: Դրանից հետո կտորը մոտ մեկ ժամ եռացնում են օճառասոդային լուծույթում, հետո լավ պարզաջրում նախ տաք, հետո սառը ջրով: Սա կտորը յուղազերծելու համար է, որպեսզի ներկը լավ նստի Հանգուցային մեթոդի համար հարկավոր է սովորել ճիշտ, անհրաժեշտ հաջորդականությամբ ծալել կտորը և հստակ պատկերացնել, թե ինչպիսին կլինի ներկման արդյունքը: Հարկավոր է հիշել երկու կարևոր պայման. նախ կտորը պետք է խոնավ լինի և հետո, ներկման ընթացքը կես ժամից պակաս չի կարող տևել[22]:

Այս մեթոդը կիրառելիս պետք կգա նաև օրիգամիի արվեստը: Օրինակ՝ եթե ուզում եք մեջտեղում շրջան ստանալ, պիտի կտորը ծալեք չորս տակ, ստացված ուղղանկյունը կամ քառակուսին էլ՝ անկյունագծով: Դրանից հետո պետք է բամբակյա թելով կապել կենտրոնը և եռանկյան անկյուններ: Կլոր հավաքելու դեպքում կապում ենք նաև տրամագծով: Այնուհետև կարող ենք ազատ ներկել:

Բատիկի այս տեխնիկան հայտնվել է Ճապոնիայում՝ օրիգամիի ծննդավայրում: Ազատ նախշազարդումը բավականին յուրօրինակ բայց միևնույն ժամանակ խիստ խմտություններ չպահանջող տեխնիկա է , որը հաճախ օգնագործվում է սկսնակների կողմից, ի տարբերություն մյուս տեսակների որոնք պահանջում են առավել պրոֆեսիոնալ մոտեցում[23]:

Այսպիսով, ինչպես նկատում ենք բատիկի յուրաքանչյուր տեսակ ունի առանձնահատկությունները, դժվարություններն ու յուրօրինակությունը:

---

[22]Տե՛ս Елена Александровна Шилкова- Волшебный батик, Москва, 2012 էջ -112

[23]Տե՛ս Шатунова Ольга Васильевна, Сергеева Альбина Борисовна-Современные виды декоративно-прикладного творчества: Учебное пособие, Елабуга 2015 էջ 15

Եզրակացություն

Ուսումնասիրելով բատիկի արվեստը, դրա կիրառման միջոցներն ու առանձնահատկությունները պարզ է դառնում նախ այն, որ այն պահանջում է պրոֆեսիոնալ մոտեցում սկսած գործածվող նյութերը ճիշտ կիրառելուց մինչև գունագիտություն։

Բատիկը շարունակաբար զարգացող արվեստ է քանի որ միայն դրա շնորհիվ է այն կարողանում է արձագանքել հասարակության ամենատարբեր շերտերի պահանջներին և մշտապես լինել պահանջված։ Բացի դա, այն ունի կիրառության բազմազանություն , այսինքն այն կարող է կիրառվել և՛ կտավների, և վարագույրների և՛ հագուսի տարբեր տեսակների պարագայում և յուրաքանչյուր դեպքում նորովի դսևորել իր յուրօրինակությունը։

Ինչպես հայտնի է ներկայիս մեթոդական գրականության մեջ կերպարվեստի ճյուղերը 5 –ն են սակայն բատիկն ուսումնասիրելիս, և հաշվի առնելով դրա բովանդակային խորությունը, միանշանակ կարելի է նկատել որ այն իր տեղը կարող է ձեռք բերել կերպարվեստի տեսակների շարքում և իհարկե ուսուցանվել։ Վերջինս կտա հնարավորություն կերպարվեստով հետաքրքրված անձանց նոր տեսանկյունից ձեռք բերել գիտելիքներ նկարչական տարբեր տեխնիկաների և գունագիտության մասին։ Միաժամանակ, կախված նրանից թե բատիկի որ տեխնիկան է կիրառվում, մշտապես հնարավոր է գրանցել որևէ արդյունք, հաջողությամբ իրացնել սեփական երևակայությունը։

Բատիկը հնարավորություն է տալիս տարբերվելու, ընդգծելու սեփական համարձակությունն ու ինքնատիպությունը, սեփական ես-ը։ Հետևաբար, տրամաբանական է դառնում այնլ, որ բատիկի պահանջարկը գնալով ավելանում է ժամանակակակից աշխարհում։ Պատճառն այն է, որ այն կարողանում է և՛ դառնալ միջոց ցուցադրել անցյալում գոյություն ունեցող արժեքները, և՛ միաժամանակ շարժվում է ժամանակին համընթաց և ինքնին կարողանում է թելադրել ճաշակ։ Հետևաբար բատիկի ուսուցանումը նկարչությամբ հետաքրքրված անձանց կտա հնարավորոթյուն մշտապես ստեղծել և պահպանել ուշադրություն սեփական աշխատանքների շուրջ։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Анна Эм - Батик. 50 уникальных примеров, Москва 2021
2. Анна Эм - Батик. Шаг за шагом, Москва 2010
3. Погадаев, Виктор. «Чудо батика» — в «Сударушка», Москва 2001
4. Погадаев, Виктор. «Символ единения душ» Москва 1999
5. Елена Александровна Шилкова- Волшебный батик, Москва 2012
6. Елена Александровна Шилкова- Батик, Москва 2012
7. Иолтуховская Екатерина Александровна- Батик для начинающих. Мастер-классы по ручной росписи шелка, Санкт-Петербург 2015
8. Сергей Германович Давыдов - Батик: техника, приемы, изделия: [энциклопедия], Москва, 2010
9. Сергей Павлович Кашин- Ваш домашний стилист. Шарфик, платочек, парео. Как красиво и модно повязать, Москва 2013
10. Н.И. Фальковский - История водоснабжения в Россииб Москва 2013
11. Шатунова Ольга Васильевна, Сергеева Альбина Борисовна - Современные виды декоративно-прикладного творчества: Учебное пособие, Елабуга 2015
12. Погадаев В. А. Малайзия. Карманная энциклопедия. М.: Муравей-гайд, 2000
13. Martha C.S. Heppard-Watercolor Batik: An Artist'S Guide to Watercolor Batik on Rice Paper, USA 2015
14. Dr. Priti Samyukta-A Comparative Study of Batik and Kalamkari Paintings, USA 2021
15. Ludmila Maltseva, Tatyana Belaya- METHODS OF EDUCATION OF FINE ARTS AND CRAFTS, USA, 2015
16. Rudolf Smend, Donald Harper - Batik, Traditional Textiles of Indonesia,2016
17. Fiona Kerlogue, Dagmar Pospíšilová - Batik. Traces through time, Prague 2021

ՀԱՎԵԼՎԱԾ

Նկարներ

«Ախթամար եկեղեցի» չափս՝ 70/80սմ

«Akhtamar church» size 70/80

«Սուրբ Գրիգոր եկեղեցի» չափս՝ 70/80 սմ

«Church of St. Gregory» size 70/80

870

G. Mkrtchyan